ՔԱՂՎԱԾՔ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.04.2018թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության խմբակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Արտյոմ Գրիգորյանը, Սեյրան Ղամբարյանը, Մարինե Հովհաննիսյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Գայանե Քալանթարյանը, Խորեն Վարդանյանը, Վահե Դոխոյանը, Արման Ափինյանը, Արմեն Մատինյանը և Վահագն Ավագյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության խմբակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Սեյրան Աղաբեկյանը,Արևիկ Լոքյանը:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության խմբակցության ավագանու անդամներ՝

Արկադի Փելեշյանը, Էրիկ Մովսիսյանը, Տիգրան Նազարյանը և Հասմիկ Խլոպուզյանը:

Նիստից բացակայում էին՝

«Հայկական Վերածնունդ» կուսակցության խմբակցության ավագանու անդամ՝

Կարեն Դավթյանը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը, Սուրեն Կարապետյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝ Այծեմնիկ Օհանյանը, Հրանտ Մարգարյանը, Դավիթ Հակոբյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.20-ին նիստը հայտարարեց բացված:

(Վանաձորի ավագանու 3-րդ նստաշրջանի 2018 թվականի ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է https://www.youtube.com/watch?v=uqKaap69Cjkհղումով)

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ հաստատել օրակարգն ամբողջությամբ:

Կողմ՝ 19, քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

Հաստատվեց օրակարգը՝

1. Վանաձոր քաղաքի Սասունցիների փողոցի թիվ 45/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը հանդիսացող եկեղեցին, եկեղեցապատկան շինություններն ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու մասին:

Զեկ.՝ Ս.Աբովյան

2. Վանաձոր քաղաքի Խնձորուտ 2-րդ փողոց 2-րդ նրբանցք թիվ 7/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը հանդիսացող եկեղեցին, եկեղեցապատկան շինություններն ու դրանց կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու մասին:

Զեկ.՝ Ս.Աբովյան

3. Նապոլեոն Անաստասի Անդրեասյանին, Նինա Աղաբեկի Խաչատրյանին և Նարեկ Նապոլեոնի Անդրեասյանին Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտայի թիվ 57/17 հասցեում գտնվող՝ Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը /բնակելի տունը, իր զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը/ օտարելու մասին:

Զեկ.՝Ս.Աբովյան

4. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային և կրկնաճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին:

Զեկ.՝Ս.Աբովյան

5. «Վանաձոր համայնքի թիվ 30 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում խումբ բացելու մասին:

Զեկ.՝ Գ.Բաղյան

6. Համայնքային սեփականություն հանդիսացող աղբատար մեքենան վարձակալությամբ հանձնելու մասին:

Զեկ.՝ Վ.Դավիթավյան

7. «Օլիմպիական հերթափոխի մենապայքարային մարզաձևերի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի հաշվեկշռից ջրատաքացուցիչ կաթսան «Լոռի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի հաշվեկշիռ տեղափոխելու մասին:

Զեկ.՝ Վ.Դավիթավյան

8. «Նեցուկ ՀՁ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը դիզելային վառելիք տրամադրելու մասին:

Զեկ.՝ Վ.Գրիգորյան

9. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

Զեկ.՝ Մ.Ասլանյան

1. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր քաղաքի Սասունցիների փողոցի թիվ 45/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը հանդիսացող եկեղեցին, եկեղեցապատկան շինություններն ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի պաշտոնակատար Սուրեն Աբովյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում :

2. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր քաղաքի Խնձորուտ 2-րդ փողոց 2-րդ նրբանցք թիվ 7/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը հանդիսացող եկեղեցին, եկեղեցապատկան շինություններն ու դրանց կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի պաշտոնակատար Սուրեն Աբովյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

3.ԼՍԵՑԻՆ - Նապոլեոն Անաստասի Անդրեասյանին, Նինա Աղաբեկի Խաչատրյանին և Նարեկ Նապոլեոնի Անդրեասյանին Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտայի թիվ 57/17 հասցեում գտնվող՝ Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը /բնակելի տունը, իր զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը/ օտարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի պաշտոնակատար Սուրեն Աբովյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

4.ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային և կրկնաճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի պաշտոնակատար Սուրեն Աբովյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ - «Վանաձոր համայնքի թիվ 30 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում խումբ բացելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:
Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

6.ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող աղբատար մեքենան վարձակալությամբ հանձնելու մասին:

– Զեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետի պաշտոնակատար Վ.Դավիթավյանը:
Զեկուցողը պատասխանեց ավագանու անդամ Հասմիկ Խլոպուզյանի լրացուցիչ պարզաբանում պահանջող հարցին:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - «Օլիմպիական հերթափոխի մենապայքարային մարզաձևերի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի հաշվեկշռից ջրատաքացուցիչ կաթսան «Լողի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի հաշվեկշիռ տեղափոխելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետի պաշտոնակատար Վ.Դավիթավյանը:
Զեկուցողը պատասխանեց ավագանու անդամներ Գայանե Քալանթարյանի և Սեյրան Ղամբարյանի լրացուցիչ պարզաբանում պահանջող հարցերին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

8. ԼՍԵՑԻՆ - «Նեցուկ ՀԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը դիզելային վառելիք տրամադրելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսական բաժնի պետի պաշտոնակատար Վահե Գրիգորյանը:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Զեկուցողը պատասխանեց ավագանու անդամ Խորեն Վարդանյանի պարզաբանում պահանջող հարցին:

Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:

9. Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2018 թվականի մայիսի 30-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 19 կողմ, ընդունվեց որոշում:

Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2018 թվականի մայիսի 30-ը:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը